Արձանագրություն N 2

«ԳՀԾՁԲ-2018/6-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «13» «փետրվարի» 2018թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Լ.Դանիելյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ.Սարգսյան, Կ.Մկրտչյան, Ժ.Դավթյան, Ա.Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Մ.Կարապետյան
Բացակայում էին՝

1. ԳՀԾՁԲ-2018/6-ԵՊԲՀ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման մասին

1.1 Հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետև՝ Համակարգ)՝ www.armeps.am կայքի միջոցով՝ միջոցով 2018 թվականի փետրվարի 13-ին ժամը 11[00]-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. Տեղեկատվություն գնվելիք ծառայության գնի և հայտ ներկայացրած մասնակցի մասին

2.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնվելիք ծառայության գինը՝ մեկ թվով արտահայտված.

Հ/հ	Ծառայության անվանումը	Ծառայության գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	ԷՍԳ հեռահար մշտադիտարկման համալիրի վարձակալության ծառայություն	2 394 000(Երկու միլիոն երեք հարյուր իննսունչորս հազար)

2.2 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/հ	Հայտ ներկայացրած մասնակից		
	անվանումը	էլեկտրոնային փոստի հասցեն	գտնվելու վայրը (հասցեն)
1	«Անհատական բուժախտորոշում» ՍՊԸ	garmagh@rambler.ru	Ք.Երևան, Բաղրամյան 1-ին փկղ, 14/29

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0:

3. Տեղեկատվություն մասնակցի ներկայացրած հայտի՝ պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 <<Անհատական բուժախտորոշում>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

4. Տեղեկատվություն հայտի ներկայացրած մասնակցի գնային առաջարկի մասին

4.1 Մասնակցի կողմից առաջարկված գնային առաջարկը ներկայացված է ստերև

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի կողմից առաջարկված գինը (ՀՀդրամ), Ընդհանուր գին ԱԱՀ ներառյալ
1	«Անհատական բուժախտորոշում»ՍՊԸ	2 394 000(երկու միլիոն երեք հարյուր իննսունչորս հազար)

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0:

5.«ԳՀԾՁԲ-2018/6-ԵՊԲՀ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

5.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

- Հրավերի պահանջների նկատմամբ բավարար հայտ ներկայացրած «Անհատական բուժախնամություն»ՍՊԸ

ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0:

6. Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարվելիք գործողությունների մասին

6.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերի <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ.

բ) 6.1 կետի ա) ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

7. Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի անուն-ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝	_____ *(ստորագրությունը)*	**Լ. Դանիելյան**
Հանձնաժողովի անդամներ՝	_____ *(ստորագրությունը)*	**Հ. Սարգսյան**
	_____ *(ստորագրությունը)*	**Կ. Մկրտչյան**
	_____ *(ստորագրությունը)*	**Ժ. Դավթյան**
	_____ *(ստորագրությունը)*	**Ա. Հակոբյան**
Հանձնաժողովի քարտուղար՝	_____ *(ստորագրությունը)*	**Մ. Կարապետյան**